

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 օգոստոսի 2007 թվականի N 877-Ն

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը *որոշում է*:

1. Հաստատել ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրի
իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ս. Սարգսյան

2007 թ. օգոստոսի 6
Երևան

Կ Ա Ր Գ

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է ինովացիոն գործունեությանը պետական աջակցության տարեկան ծրագրի իրականացման կարգը:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում ինովացիոն նախագծերի ֆինանսավորման և համաֆինանսավորման համար հատկացումներ նախատեսվում են միայն մրցութային կարգով ընտրված և ինովացիոն բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից հաստատված ինովացիոն նախագծերի հայտերի ֆինանսական նախահաշիվների հիման վրա, որոնք, որպես լիազոր մարմնի կողմից կազմվող բյուջետային ֆինանսավորման հայտի հիմնավորում և դրա անբաժանելի մաս, ինովացիոն գործունեությանը պետական աջակցության տարեկան ծրագրի տեսքով (այսուհետ՝ տարեկան ծրագիր) սահմանված կարգով ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ մինչև բյուջետային գործընթացն սկսելը:

3. Ինովացիոն նախագծերի ֆինանսավորման մրցույթին մասնակցելու հայտի ձևի տրամադրումը, մրցույթի հայտերի ընդունումը, մրցութային հանձնաժողովի ձևավորումն ու հայտերի փորձագիտական գնահատումը կազմակերպում է լիազոր մարմինը:

II. ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԸ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼԸ

4. Լիազոր մարմինը սահմանված կարգով ընդունված մրցույթի հայտերը տրամադրում է լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովին՝ հայտերի նախնական ընտրության և մասնագիտական փորձաքննության երաշխավորելու համար: Փորձագիտական գնահատման հիմքով մրցութային հանձնաժողովն իրականացնում է դրանց վերջնական ընտրությունը:

5. Մրցութային կարգով ընտրված ինովացիոն նախագծերը հաստատվում են լիազոր մարմնի կողմից: Այդ նախագծերի ծախսերի նախահաշիվները ներառվում են տվյալ տարվան հաջորդող տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում՝ որպես տարեկան ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտ:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ընդգրկված տարեկան ծրագրի առանձին ինովացիոն նախագծերի իրականացման համար դրանց ղեկավարների հետ լիազոր մարմինը կնքում է պայմանագրեր, որտեղ սահմանվում են նաև հաշվետվությունների ներկայացման կարգը և ժամկետները:

7. Լիազոր մարմինը հաշվետվությունները տրամադրում է մրցութային հանձնաժողովի քննարկմանը: Մրցութային հանձնաժողովի որոշումը հաստատվում է լիազոր մարմնի կողմից:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան